

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԲԺՇԿԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ» ԱՍԲԻՈՆԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՏԱՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՍՏ ԱՍԲԻՈՆԻ 2020-2025 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ

Դասընթացներ

«Բժշկական սաբանական առարկաների» ամբիոնը գործում է «Բուժական գործ» և «Ստոմատոլոգիա» ֆակուլտետների կազմում՝ անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով:

Ամբիոնն իրականացնում է հետևյալ մասնագիտական առարկաների դասավանդումը՝

N	Առարկա	Ֆակուլտետ
1.	Հյուսվածաբանություն, Էմբրիոլոգիա, բջջաբանություն	Բուժական Ստոմատոլոգիական
2.	Մարդու անատոմիա	Բուժական Ստոմատոլոգիական
3.	Կենսաբանություն	Բուժական Ստոմատոլոգիական
4.	Տոպոգրաֆիկ անատոմիա և օպեր. վիր.	Բուժական Ստոմատոլոգիական
5.	Նորմալ ֆիզիոլոգիա	Բուժական Ստոմատոլոգիական
6.	Մանրէաբանություն, վիրուսաբանություն, իմունոլոգիա	Բուժական Ստոմատոլոգիական
7.	Ախտաբանական անատոմիա	Բուժական Ստոմատոլոգիական
8.	Ախտաբանական ֆիզիոլոգիա	Բուժական Ստոմատոլոգիական
9.	Դատական բժշկություն	Բուժական Ստոմատոլոգիական
10.	Սեկցիոն կուրս	Բուժական
11.	Էմբրիոլոգիա /ընտրովի/	Բուժական

2022-2023 ուս. տարում ամբիոնի աշխատանքների ուսումնական ծավալը կազմել է **9759 ժամ:**

Դասախոսների կողմից ուսումնական ծանրաբեռնվածությունը կազմել է **7824 ժամ:**

Դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

Ամբիոնն ապահովված է համապատասխան որակյալ մասնագետներով և 2022-23 ուս.տարում ունեցել է թվով 13 աշխատակից, որից՝

- գիտությունների դոկտոր, պրոֆեսոր – 1,
- գիտությունների դոկտոր, դոցենտ - 1
- գիտությունների թեկնածու, դոցենտ- 1,
- գիտությունների թեկնածու – 6,
- դասախոս- 3,
- ուսումնասովանողակ -1:

Պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարիքը՝ 48 տարեկան: Օտարալեզու խմբերում դասավանդող դասախոսները գերազանց տիրապետում են անգլերենին՝ ունեն անգլերենի իմացության B2 կամ C1 մակարդակ, դասախոսություններն ու գործնական պարապմունքներն անց են կացվում առանց որևէ լեզվական խոչընդոտի:

- ՀՀ տարբեր բժշկական ուսումնարաններից ԱԲՀ բուժական II և ստոմատոլոգիական II կուրսերում իրենց ուսումն են շարունակել հայ ուսանողներ: «Հյուսվածաբանություն, Էմբրիոլոգիա, բջջաբանություն» և «Ախտաբանական անատոմիա» առարկաներն այս խմբերին (205 բուժ. և 202 ստոմ.) դասավանդել է **ԱԲՀ նոր դասախոս, կ.գ.թ. Էվելինա Սուրենի Հակոբջանյանը**, ով դասավանդման հարուստ փորձ ունի, աշխատել է հանրապետության տարբեր բժշկական բուհերում՝ ԵՊԲՀ, «Հայկական բժշկական համալսարան»: ՊՂ կազմում այլ փոփոխություններ չունենք.
 - «Կենսաբանություն» դասընթացը դասավանդել է կ.գ.թ., դոցենտ Գ.Մ. Արաջյանը:
 - «Մարդու անատոմիա» դասընթացը դասավանդել են Ն.Զ. Խլղաթյանը և բ.գ.դ., պրոֆեսոր Ա.Լ. Մինասյանը:
 - «Հյուսվածաբանություն, Էմբրիոլոգիա, բջջաբանություն» դասընթացը դասավանդել են կ.գ.թ. Ն.Գ. Հունանյանը և կ.գ.թ. Է. Ս. Հակոբջանյանը:
 - «Տեղագրական անատոմիա և օպեր. վիր.» առարկան այս ուս.տարում ևս դասավանդվել է համալսարանի երկու մասնագետների՝ բ.գ.դ., պրոֆ. Ա.Լ. Մինասյանի և բ.գ.թ. Է. Ավագյանի կողմից: Օպերատիվ անցումային պլանների առկայությամբ պայմանավորված՝ այս առարկան ուսումնասիրել են ոչ միայն երկրորդ և երրորդ կուրսերը, այլ նաև որոշ ավագ խմբերի ուսանողներ (V կուրս, ստոմ. ֆակուլտետ 502 և 503 խմբեր, VI կուրս, բուժ. ֆակուլտետ, 603 խումբ):
 - «Նորմալ ֆիզիոլոգիա» դասընթացը դասավանդել է կ.գ.թ. Հ. Յու. Ստեփանյանը:
 - «Մանրէաբանություն, վիրուսաբանություն, իմունոլոգիա» առարկան դասավանդել են կ.գ.դ., դոցենտ Հ.Հ. Փանոսյանը և կ.գ.թ. Դ. Սողոմոնյանը:
 - «Ախտաբանական անատոմիա» առարկան դասավանդել են Հ.Ա. Սիրաեղարյանը և կ.գ.թ. Է.Ս. Հակոբջանյանը:
 - «Ախտաբանական ֆիզիոլոգիա» առարկան դասավանդել է կ.գ.թ.Լ.Մ. Սուքիասյանը:
 - «Դատական բժշկություն» և «Մեկցիոն կուրս» դասընթացների դասավանդումն իրականացրել է Ա. Խաչպանյանը: «Դատական բժշկություն» առարկան բուժական ֆակուլտետ, VI կուրսի ուսանողների մոտ զարնանային կիսամյակից տեղափոխվել և դասավանդվել է աշնանային կիսամյակում, համաձայնեցնելով մասնագետի՝ արտասահմանում ունեցած վերապատրաստման պլանների հետ: Օպերատիվ

անցումային պլաններով ուսումնառող ընդհանուր բժշկության ֆակուլտետի ուսանողները «Դատական բժշկություն» չեն ուսումնասիրել (VI կուրս, 603 խումբ)՝ հաշվի առնելով առկա առարկայական տարբերությունները. նրանք տեղափոխվել են Մայր Թերեզայի անվան բժշկական համալսարանից:

- «Էմբրիոլոգիա» ընտրովի դասընթացը այս տարի ևս դասավանդվել է բուժական ֆակուլտետի IV կուրսի ուսանողներին (26 հոգի), ովքեր ընտրել են առարկան և այն ուսումնասիրել ամբիոնի վարիչ, կ.գ.թ. Ն.Գ. Հունանյանի հետ:

Գարնանային կիսամյակում II կուրս, 205 հայկական խումբը լուծարվել է. այս խմբի համար պլանավորված և չկատարված ժամերը արտացոլվում են համապատասխան առարկաները դասավանդող դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածության շեղման արժեքներում /կցվում է հաշվետվությանը/:

Ամբիոնի ուսումնագիտական ռեսուրսները

- ԱԲՀ-ի գլխավոր մասնաշենքում առկա են համապատասխան մասնագիտացված կաբինետներ, լսարաններ և լաբորատորիաներ՝ ամբիոնի առարկաների արդյունավետ դասավանդման համար: Դասախոսության համար նախատեսված լսարանները հագեցած են անհրաժեշտ տեսացուցադրման տեխնիկայով (համակարգիչ, պրոյեկտոր և այլն): Լաբորատոր և գործնական պարապմունքների համար նախատեսված մասնագիտացված կաբինետներում կան սարքավորումներ, նյութեր, գործիքներ և միկրո-, մակրոպատրաստուկներ:
- 2022 թվականի հուլիսի 25-ին տեղի ունեցած ամբիոնի նիստում մասնագետները ներկայացրել են դասընթացների դասավանդման բարելավման համար անհրաժեշտ ռեսուրսների (նյութեր և սարքավորումներ) ցանկը ***/ՀԻՄՔ՝ Բժշկակենսաբանական առարկաների ամբիոն, 2021-2022 ուս.տարի, ամբիոնի թիվ 11 նիստի արձանագրություն, կից՝ ռեսուրսների ցանկ/***: Ցավոք, ԱԲՀ-ն ՀՀ ԿԳՄՍ նախարարության ԾԻԳ-ի կողմից հայտարարված ՆՄՀ դրամաշնորհային ծրագրի շահառուն չդարձավ և 2022-23 ուս. տարում այդ ծրագրի շրջանակներում հնարավոր չեղավ թարմացնել նյութատեխնիկական բազան: Նշված սարքերի մեծամասնության ձեռք բերումը հետաձգվել է, պլանավորվում է դա անել նոր մասնաշենքի կառուցումից անմիջապես հետո՝ ժամանակակից ուսումնագիտական ռեսուրսներով համալրելով ամբիոնի մասնագիտացված կաբինետներն ու լաբորատոր սենյակները: Սա կնպաստի ուսանողների կողմից հմտությունների ձեռք բերմանը, ինչպես նաև թույլ կտա ԱԲՀ-ում իրականացնել գիտահետազոտական աշխատանքեր և դրանցում ներգրավել նաև ուսանողներին:
- Ամբիոնին անհրաժեշտ է ունենալ տպող և պատճենող սարք՝ վարչական աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար:
- «Մուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ն հանդիսանում է «Ախտաբանական անատոմիա» և «Դատական բժշկություն», «Սեկցիոն կուրս» դասընթացների կլինիկական բազան:

Հետազոտությունների հիմնական ուղղությունները և ձեռքբերումները

«Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնը միշտ աչքի է ընկել իր ՊԴ կազմի ակտիվ գիտական գործունեությամբ:

- 2022-2023 ուս.տարում ևս ամբիոնի դասախոսները մասնակցել են կոնֆերանսների, անցել վերապատրաստումներ, ունեն տպագրված գրքեր, գրքերի գլուխներ, բազմաթիվ գիտական հոդվածներ, թեզիսներ՝ տարբեր ամսագրերում և ժողովածուներում (**ՀԻՄՔ՝ էլեկտրոնային հղումներ և մասնակցության հավաստագրեր**):

Գրքեր

1. Singh R.P., Manchanda G., Bhattacharjee K. (**Panosyan H.**) 2022. Microbial Syntrophy Mediated Eco-enterprising, Elsevier, Academic Press, 346 pages.

Գրքի գլուխներ

1. **Naira G. Hunanyan**, Knarik V. Kazaryan and Tatevik A. Piliposyan. /Department of Smooth Muscle Physiology, Orbeli Institute of Physiology, Yerevan, Armenia, **University of Traditional Medicine, Yerevan, Armenia** / Animal models in myometrial activity research: morphofunctional features, role of oxytocin. In: “Oxytocin and Social Function”, edited by Dr Wei Wu. **IntechOpen, London, UK, 2023**. DOI: <http://dx.doi.org/10.5772/intechopen.112086>.
2. Tadevosyan M., Yeghiazaryan S., Ghevondyan D., Saghatelyan A., Margaryan A. (**Panosyan H.**) Microbial thermostable hydrolases (amylases, lipases, and keratinases) and polymerases: biology and applications. Elsevier Academic Press, **2022**, p. 177-204.

Հոդվածներ

1. Казарян К.В., **Унанян Н.Г.**, Пилипосян Т.А., Чибухчян Р.Г., Мкртчян А.В. **2022**. Регуляция электрического ритмогенеза правой фаллопиевой трубы пейсмекерной активностью левого рога. *The scientific heritage*, N 89, С 27-30. DOI: 10.5281/zenodo.6575748 <https://zenodo.org/record/6575748#.YpmvXEрBzIU>.
2. Казарян К. В., **Унанян Н.Г.**, Пилипосян Т.А., Чибухчян Р.Г., Мкртчян А.В. **2022**. Взаимосвязь электрической активности фаллопиевых труб с телом матки у крыс. *MEDICUS*, 4 (46): С 6-15. <https://elibrary.ru/item.asp?id=49169104> http://scimedicus.ru/f/medicus_no_4_46_july.pdf
3. Kazaryan Q.V., **Hunanyan N.G.**, Piliposyan T.A., Chibukhchyan R.G., Mkrтчyan A.V. **2023**. The Role of The Fallopian Tube in Performance Of The Main Myometrial Functions. // *Acta Scientific MEDICAL SCIENCES*. V. 7 (5). PP.191-196. **IF=1.403** <https://www.actascientific.com/ASMS/ASMS-07-1561.php>
4. Traube F.R., Brandmayr C., Wagner M., Carell T. (**Panosyan H.**) tRNA modification profiles in obligate and moderate thermophilic bacilli. **2022** *Extremophiles*, 26,11, <https://doi.org/10.1007/s00792-022-01258-z>.
5. Sargsyan R., Khechikyan M. (**Panosyan H.**) Study on antimicrobial activity of various extracts of saxicolous lichen *Lecanora muralis*. **2023** *Biolog. J. Armenia*, 75 (1), 34-39.
6. Avagimyan A., **Sukiasyan L.**, Kakturskiy L., Mkrтчyan L., Chavushyan V., Chelidze K., Ionov A., Pavluchenko I. Diabefit as a modifier of fructose-induced impairment of cardio-vascular

- System. *Current Problems in Cardiology* **2022**, 47(10), 100943 doi: 10.1016/j.cpcardiol.2021.100943. <https://doi.org/10.1016/j.cpcardiol.2021.100943>
7. **Suqiasyan L.M.** Fructose-induced alteration of the heart and vessels homeostasis. *Current Problems in Cardiology* **2023**, 48(2), 101013 DOI:[10.1016/j.cpcardiol.2021.101013](https://doi.org/10.1016/j.cpcardiol.2021.101013) <https://doi.org/10.1016/j.cpcardiol.2021.101013>
 8. Chavushyan V.A., Simonyan K.V., Danielyan M.H., Avetisyan L.G., Darbinyan L.V., Isoyan A.S., Lorikyan A.G., Hovhannisyan L.E., Babakhanyan M.A., **Sukiasyan L.M.** Pathology and prevention of brain microvascular and neuronal dysfunction caused by a high-fructose diet in rats. *Metabolic Brain Disease* **2023** 38:269–286 doi: 10.1007/s11011-022-01098-y. PMID: 36271967 <https://doi.org/10.1007/s11011-022-01098-y>
 9. Musheghyan G., **Arajyan G.**, Harutunyan I., Ter-Hovsepyan A., Matsakyan M., Isajanian M. Cochlear implantation as a way to overcome hearing problems. *Armenian journal of special education* **2023**, vol 7 no 1. DOI: <https://doi.org/10.24234/se.v6i1.305>
 10. Musheghyan G., **Arajyan G.**, Poghosyan M., Hovsepyan V., Sarkissian J. Synaptic processes in the antinociceptive somatosensory cortex si of the Brain activated by the ventral posterior-lateral thalamic nucleus in a rotenone model of Parkinson's disease. *Georgian medical news* **2023**; (336):117-122.
 11. Хачатрян Л.М., Погосян М.В., Даниелян М.А., Аветисян З.А., **Минасян А.Л., Степанян А.Ю., Саркисян Дж.С.** **2022.** Микроэлектрофизиологическое изучение соотношения возбуждательных и тормозных синаптических процессов в кортиконигральной проекции к SNc на модели болезни Паркинсона. *Медицинская наука Армении НАН РА*, т. LXII, № 1, с.83-90.
 12. Musheghyan G. Kh., Poghosyan M.V., **Minasyan A.L., Stepanyan H.Y., Sarkissian J.S.** **2022.** Synaptic Processes in Raphe Magnus Nucleus under Activation Periaqueductal Gray Matter on the Model of Parkinson's Disease. *J Biotechnology App*, No. 1(issue 1), pp. 1-8.
 13. Musheghyan G. Kh., Poghosyan M.V., Danielyan M.H., **Stepanyan H.Y., Sarkissian J.S.** **2022.** The synaptic processes in periaqueductal gray matter under activation of locus coeruleus on the rotenone model of Parkinson's disease. *New Armenian Medical Journal*.

Վերապատրաստումներ

- 2022-2023 ուս. տարվա ընթացքում ևս ամբիոնի ՊԴ կազմը ակտիվորեն մասնակցել է ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտոր Ա. Գյոզալյանի նախաձեռնությամբ կազմակերպված բոլոր միջոցառումներին:
- 2023թ. հունիսի 23-25ը ՈԱԱԿ-ը եռօրյա վերապատրաստում կազմակերպեց «Կրթական ծրագրերի համահնչեցում WFME չափորոշիչներին» թեմայով, որին մասնակցեց նաև «Բժշկական սարքավորանքների» ամբիոնի վարիչ Ն.Գ. Հունանյանը (**ՀԻՄՔ՝ մասնակցության հավաստագիր**):
- **Հ.Ս. Հովհաննիսյան** – մասնակցություն «Էխոսրտագրություն» կատարելագործման դասընթացին, 10.01.2022- 25.02.2022, ԵՊԲՀ (**ՀԻՄՔ՝ մասնակցության հավաստագիր՝ տրված 25.02.2022թ**):

- **Հ.Մ. Հովհաննիսյան** – շարունակական մասնագիտական զարգացման ՀԱՎԱՍՏԱԳԻՐ: Ունի 220 ՇՄԶ կրեդիտ և իրավունք՝ առողջապահության բնագավառում ինքնուրույն մասնագիտական գործունեություն իրականացնելու համար: Տրված է՝ 19.09.2022թ., ուժի մեջ է մինչև՝ 19.09.2027թ. (**ՀԻՄՔ՝ հավաստագիր**):

Սյլ գիտատուսմանական ձեռքբերումներ

- Հոկտեմբերի 7-10-ը ՀՀ ԳԱԱ Լ.Ա.Օրբելու անվան Ֆիզիոլոգիայի ինստիտուտում տեղի ունեցավ Հարավարևելյան Եվրոպայի Կենսապատկերման Կազմակերպության (BIO-SEE) տարեկան միջազգային գիտաժողովը՝ «Կենսապատկերման ժամանակակից մեթոդները ֆիզիոլոգիայի և բժշկության ոլորտում» խորագրի ներքո, որին մասնակցեցին նաև «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնի դասախոսներ **Ն.Գ. Հունանյանը, Հ. Յու. Ստեփանյանը և Լ.Մ. Սուքիասյանը**:
- Նոյեմբերի 25-26-ը Ավանդական բժշկության համալսարանի Բուժական ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողուհի Շողեր Հարությունյանը մասնակցեց Բելառուսի Հանրապետության Գրողնոյի պետական բժշկական համալսարանի կողմից կազմակերպված «Երիտասարդ գիտնականների ժամանակակից նվաճումները բժշկության մեջ - 2022թ.» թեմայով հանրապետական IX գիտագործնական գիտաժողովին: Նա հանդես եկավ «Փոքր բջջային թոքերի քաղցրեղ» թեմայով, «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնի դասախոս՝ **Հ.Յու. Ստեփանյանի** ղեկավարությամբ:
- 2023 թվականի մարտի 18-ին Հայ-ռուսական համալսարանում տեղի ունեցավ Ավանդական բժշկության համալսարանի ֆուտբոլի ներբուհական առաջնությունը: Առաջնությանը մասնակցեցին «Բուժական» և «Ստոմատոլոգիական» ֆակուլտետների տարբեր կուրսերի օտարերկրյա ուսանողները՝ Հնդկաստանից, Հորդանանից, Գանայից, Իրաքից և Մեծ Բրիտանիայից: Խաղին ներկա էր նաև «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնի դասախոս **Լիլիթ Սուքիասյանը**, որպես բժշկուհի:
- 2023 թվականի մայիսի 25-ին Ավանդական բժշկության համալսարանում տեղի ունեցավ ուսանողական գիտաժողով՝ «Ինտեգրատիվ բժշկությունը՝ ապացուցողական բժշկության համատեքստում» թեմայով: «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնի դասախոս **Հ. Յու. Ստեփանյանը** հանդես եկավ ընտրված ժյուրիի կազմում (**ՀԻՄՔ՝ հավաստագիր, տրված 25.05.2023թ.**):

Մասնակցություն գիտաժողովներին՝ գիտաժողովի նյութեր

1. Al-Khamees M.S., Poghosyan M., **Arajyan G.M.**, Sarkisyan J.S. Synaptic processes in substantia nigra compacta under activation of caudate -putamen nucleus on the model of parkinson’s disease with protection by hydrocortisone. *XLV International Scientific-Practical conference «EurasiaScience»*. Research and Publishing Center «Actualnots.RF», Moscow, Russia May, 15, **2022**, P. 18-25.

2. Морой Р.Е., Асатрян Т.Т., Гайковая Л.Б., **Степанян А.Ю.** Недостаточность глюкозо-6-фосфатдегидрогеназы эритроцитов как причина развития гемолитической анемии. 2022. Конференция: Современные достижения химико- биологических наук в профилактической и клинической медицине Санкт-Петербурга, 01–02 декабря 2022 года, с. 33-39.
3. Акобян А. Х., **Степанян А. Ю.**, Саркисян Дж. С. / **Институт традиционной медицины Армении РА, Институт физиологии им. Л. А. Орбели НАН РА/**. 2022. Синаптические процессы в хвостатом ядре-путамене при активации прелимбической коры мозга на ротеноновой модели болезни паркинсона под воздействием яда кобры *naja naja oxiana*. «Современные достижения молодых учёных в медицине – 2022». Сборник материалов IX Республиканской научно-практической конференции с международным участием, 25 ноября 2022 г., Гродно, ГрГМУ.С. 17-19.
4. Арутюнян Ш. А., **Степанян А. Ю.**, **Минасян А. Л.** / **Институт традиционной медицины Армении РА, Институт физиологии им. Л. А. Орбели НАН РА/**. 2022. Сравнительный анализ рака легких в странах мира и армении. «Современные достижения молодых учёных в медицине – 2022». Сборник материалов IX Республиканской научно-практической конференции с международным участием, 25 ноября 2022 г., Гродно, ГрГМУ. С. 25-28.
5. Мхитарян С. А, Погосян М. В., **Степанян А. Ю.** / **Институт традиционной медицины Армении РА, Институт физиологии им. Л. А. Орбели НАН РА/**. 2022. Синаптические процессы в большом ядре шва при активации околотоводопроводного серого вещества на ротеноновой модели болезни паркинсона. «Современные достижения молодых учёных в медицине – 2022». Сборник материалов IX Республиканской научно-практической конференции с международным участием, 25 ноября 2022 г., Гродно, ГрГМУ.С. 192-195.
6. **Hamzeh Ghorbani**, Sepideh Asadi, Simin Ghorbani, Parvin Ghorbani, **Harutyun Stepanyan**, **Nina Khlghatyan**, Diana Aghabalyan, Samaneh Bahrami, Rituraj Rituraj. Investigating the predictive contribution of attitude towards life and belief system on self-resilience and psychological toughness of cancer patients about the mediating role of emotion regulation. 19-21 January 2023, In: 2023 IEEE 21st World Symposium on Applied Machine Intelligence and Informatics (SAMI). DOI: 10.1109/SAMI58000.2023.10044491. <https://ieeexplore.ieee.org/abstract/document/10044491>
7. **Hamzeh Ghorbani**, Parvin Ghorbani, Simin Ghorbani, **Nina Khlghatyan**, Bella G. Babayan, Annamaria Varkonyi Koczy. A Robust Approach for Estimation of the Bone Age. 15-17 September 2022, In: 2022 IEEE 20th Jubilee International Symposium on Intelligent Systems and Informatics (SISY). DOI: 10.1109/SISY56759.2022.10036283 <https://ieeexplore.ieee.org/abstract/document/10036283>
8. **Hamzeh Ghorbani**, Sahar Lajmorak, Simin Ghorbani, Parvin Ghorbani, **Nina Khlghatyan**, **Harutyun Stepanyan**, Samaneh Bahrami, Seyed Mohammad Rasaei, Mehdi Ahmadi Alvar, Rituraj Rituraj. Application of a New Hybrid Machine Learning (Fuzzy-PSO) for Detection of Breast’s Tumor. 19-21 January 2023, In: 2023 IEEE 21st World Symposium on Applied Machine Intelligence and Informatics (SAMI). DOI: 10.1109/SAMI58000.2023.10044511. <https://ieeexplore.ieee.org/abstract/document/10044511>

Թեզիսներ / Մասնակցություն գիտաժողովներին` գիտաժողովի թեզիսներ

1. Kazaryan Q.V., **Hunanyan N.G.**, Mkrtchyan A.V., Piliposyan T.A., Chibukhchyan R.G., Trofimova Y.Y. Interaction between the fallopian tubes and their influence on electrical activity of the uterine corpus in rats. // The 29th International Annual ISBS “Stress and Behavior” Neuroscience and

Biological Psychiatry Conference (May 16-19, 2023). NEUROSCIENCE WEEK 2023. Abstracts. Yerevan, Armenia. P.22-23.

<https://static1.squarespace.com/static/5c30ace65b409b49b09b1b83/t/645eb0904ff1ca54e86e6662/1683927187251/ISBS+2023+Yerevan+ABSTRACTS.pdf>

2. **Sukiasyan LM**, Chavushyan VA. High-fructose diet-induced metabolic stress: vascular and neuronal parameters of rat brain dysfunction. // The 29th International Annual ISBS “Stress and Behavior” Neuroscience and Biological Psychiatry Conference (May 16-19, 2023). NEUROSCIENCE WEEK 2023. Abstracts. Yerevan, Armenia. P.20-21.

<https://static1.squarespace.com/static/5c30ace65b409b49b09b1b83/t/645eb0904ff1ca54e86e6662/1683927187251/ISBS+2023+Yerevan+ABSTRACTS.pdf>

3. **Sukiasyan L.**, Simonyan R., Babakhanyan M., Avetisyan R., Chavushyan V., Sulashvili N. Plasma endothelin as a target of therapeutic effects of the diabephyt antidiabetic medicinal herbal collection. *Caucasus Journal of Health Sciences and Public Health*, V.5, Supplement 9, 2022, p.58

<http://caucasushealth.ge/pdf/Volume%205%20supplement%209.pdf>

4. Ghevondyan D., Margaryan A., Paloyan A., Poladyan A., Antranikian G. (**Panosyan H.**) Acid whey as a prospective substrate for biomass production of thermostable α -amylase producing recombinant E. coli bl21 strain. *Abstract book of 13th International Congress on Extremophiles, Loutraki, Greece, 2022*, p. 123.

5. Margaryan A., Ghevondyan D., Birkeland N.-K. (**Panosyan H.**) Kavart acid tailing as a source for new metal resistant bacteria with a heavy metal bioremediation potential. *Abstract book of 13th International Congress on Extremophiles, Loutraki, Greece, 2022*, p. 156.

6. **Panosyan H.**, Margaryan A., Birkeland N.-K. Karvachar geothermal spring as a source of *Anoxybacillus karvacharensis* sp. nov. *Abstract book of 13th International Congress on Extremophiles. Loutraki, Greece, 2022*, p. 170.

7. Մարգարյան Ա., Ղևոնդյան Դ., Նիկոլյան Ս., Հովհաննիսյան Ս., Հարությունյան Ա., Մարգարյան Լ., Բիրկելանդ Ն.Կ. (**Փանոսյան Հ.**) Մետաղակայուն մանրէները որպես շրջակա միջավայրի կենսավերականգնման միջոցներ: *Համառոտագրերի գրքույկ*, ՀՀ ԿԳՄՍՆ Գիտության կոմիտեի Համահայկական գիտաժողով, Վանաձոր, Հայաստան, 2022թ., 26 սեպտեմբեր – 01 հոկտեմբեր:

Աստիճանաշնորհում

❖ Բժշկական սարանական առարկաների ամբիոնի դասախոս **Լիլիթ Սուրիասյանին՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:**

Ատենախոսության թեմա՝

Ֆրոկտոզով հրահրված նյութափոխանակության խանգարումների և հակախոլինէրազային ակտիվությամբ բուսական միջոցներով պրոտեկցիայի ներդրումային և անոթային ցուցանիշները:

Թեման հաստատած կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Լ.Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտ

Մասնագիտություն՝ Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա Գ.00.09

Պաշտպանության ամսաթիվ՝ 30.03.2023թ.

Հաստատման ամսաթիվ՝ 28.06.2023թ.

<https://www.bok.am/node/14654>

❖ Բժշկակենսաբանական առարկաների ամբիոնի դասախոս **Հովիկ Փանոսյանին՝ գիտությունների դոկտորի գիտական աստիճան:**

Ատենախոսության թեմա՝

Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի երկրաջերմային աղբյուրների մանրէների բազմազանությունը, կենսաբանական առանձնահատկություններն ու կենսատեխնոլոգիական ներուժը: Երևանի պետական համալսարան:

Թեման հաստատած կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Մասնագիտություն՝ Միկրոբիոլոգիա. Կենսատեխնոլոգիա Գ.00.07

Պաշտպանության ամսաթիվ՝ 14.10.2022թ.

Հաստատման ամսաթիվ՝ 02.02.2023թ.

<https://www.bok.am/node/14423>

❖ Բժշկակենսաբանական առարկաների ամբիոնի դասախոս **Արսեն Մինասյանին՝ գիտությունների պրոֆեսորի գիտական կոչում:**

Մասնագիտություն՝ Բժշկագիտություն

Հաստատման ամսաթիվ՝ 28.02.2023թ.

Անդամակցություն գիտական կազմակերպություններին

- Նաիրա Հունանյան – ՀՀ ֆիզիոլոգիական ընկերություն,
- Նաիրա Հունանյան – «FENS» ֆեդերացիա,
- Նաիրա Հունանյան – Գլխուղեղի հետազոտության միջազգային կազմակերպություն (IBRO),
- Հարություն Ստեփանյան – ՀՀ ֆիզիոլոգիական ընկերություն,
- Հարություն Ստեփանյան – «FENS» ֆեդերացիա,
- Հարություն Ստեփանյան – Գլխուղեղի հետազոտության միջազգային կազմակերպություն (IBRO),
- Գոհար Արաջյան – ՀՀ ֆիզիոլոգիական ընկերություն,
- Գոհար Արաջյան – «FENS» ֆեդերացիա,
- Գոհար Արաջյան – Գլխուղեղի հետազոտության միջազգային կազմակերպություն (IBRO):

1. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 1.4 Դասախոսության, ուսումնական նյութերի վերանայում և արդիականացում

«Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնում դասավանդվող դասընթացների նյութերը՝ դասախոսություններ, դրանց PPT ֆայլեր, ընթացիկ ստուգման առաջադրանքները

պարբերաբար վերանայվում և թարմացվում են համապատասխան մասնագետների կողմից: Ստուգվել է ԱԲՀ գրադարանում ուսումնական նյութերի առկայությունն ու հասանելիությունը ուսանողներին:

Գործողություն 1.5. Դասալսումների և փոխադարձ դասալսումների կազմակերպման, թերությունների հայտնաբերման և քննարկման միջոցով ուսուցման որակի բարելավում

▪ 2022 -23 ուս. տարվա աշնանային կիսամյակում «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնում պլանավորվել են 10, իրականացվել՝ 9 դասալսումներ՝ ամբիոնի վարիչի և դասախոսների, ուս. մասի վարիչ Ա. Սարգսյանի, դեկան Ա. Կարապետյանի կողմից: **/ՀԻՄՔ՝ Բժշկակենսաբանական առարկաների ամբիոն, ԳՈՐԾ 7՝ 2022-2023 ուս.տարի, դասալսման ժամանակացույց և դասալսման արձանագրություններ, աշնանային կիսամյակ/:** Կատարված բոլոր դասալսումների արձանագրություններ ժամանակին կազմվել և հանձնվել են ամբիոն, դիտողություններն, առաջարկություններն ու թերությունները քննարկվել են ամբիոնի համապատասխան նիստերի ընթացքում **/ՀԻՄՔ՝ Բժշկակենսաբանական առարկաների ամբիոն, 2022-2023 ուս.տարի, ամբիոնի թիվ 4 և 5 նիստերի արձանագրություններ դասալսումների քննարկումների վերաբերյալ/:** «Հյուսվածաբանություն» առարկայից դասալսում ամբիոնի վարիչ, կ.գ.թ. Ն. Հունանյանի մոտ Ա. Խաչպանյանի կողմից չի իրականացվել:

2022-23 ուս. տարվա գարնանային կիսամյակում «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնում պլանավորվել և իրականացվել են 10 դասալսումներ՝ ամբիոնի վարիչի և դասախոսների, ուս. մասի վարիչ Ա. Սարգսյանի, դեկան Ա. Կարապետյանի կողմից **(ՀԻՄՔ՝ Բժշկակենսաբանական առարկաների ամբիոն, ԳՈՐԾ 7՝ 2022-2023 ուս.տարի, դասալսման ժամանակացույց և դասալսման արձանագրություններ, գարնանային կիսամյակ):** Կատարված բոլոր դասալսումների արձանագրություններ ժամանակին կազմվել և հանձնվել են ամբիոն, դիտողություններն, առաջարկություններն ու թերությունները քննարկվել են ամբիոնի համապատասխան նիստերի ընթացքում **/ՀԻՄՔ՝ Բժշկակենսաբանական առարկաների ամբիոն, 2022-2023 ուս.տարի, ամբիոնի թիվ 8, 9, 10, 11 նիստերի արձանագրություններ դասալսումների քննարկումների վերաբերյալ /:**

Բազմիցս առաջարկվել էր, որ բ.գ.դ., պրոֆ. Ա. Մինասյանը՝ որպես հմուտ դասախոս, նախաձեռնի բաց դասեր, որոնց մասնակցեն համալսարանի երիտասարդ դասախոսները: Ա. Մինասյանն աշնանային կիսամյակում **բաց դաս է կազմակերպել**, որին ներկա էին ամբիոնի դասախոսների մեծամասնությունը, ամբիոնի վարիչը, դեկանը և ուս. մասի վարիչը / III կուրս, 301 խումբ, 7 դեկտեմբեր/։ Թեման՝ «Լապարատոմային կտրվածքների և ճողվածքահատումների հիմնական սկզբունքները, եղանակները:», գործնական պարապմունք **(ՀԻՄՔ՝ Բժշկակենսաբանական առարկաների ամբիոն, ԳՈՐԾ 7, բաց դասերի արձանագրություններ) :**

Գործողություն 1.6. Ամբիոնի կադրային ներուժի բարելավում

▪ ՊԴ կազմի համալրումը բարձրակարգ մասնագետներով իրականացվում է մրցույթային հիմունքներով և ըստ պահանջի: Հաշվետու տարում **կ.գ.թ. Էվելինա Սուրենի Հակոբջանյանն է միացել ամբիոնի ՊԴ անձնակազմին (ՀԻՄՔ՝ աշխատանքային պայմանագիր, ՄՌԿ բաժին)**, ով դասավանդման հարուստ փորձ ունի, աշխատել է

հանրապետության տարբեր բժշկական բուհերում՝ ԵՊԲՀ, «Հայկական բժշկական համալսարան», այժմ էլ մեր աշխատակիցն է:

- Ամբիոնի դասախոսները պարբերաբար իրականացվող վերապատրաստումների արդյունքում բարելավում են ինչպես իրենց մասնագիտական, այնպես էլ մանկավարժական և անզվերեն լեզվի գիտելիքները (**ՀԻՄՔ՝ վերապատրաստման հավաստագրերի կրկնօրինակներ, անձնական գործեր, ՄՈՒԿ բաժին**):
- Հունիսի 23-ից 25-ը «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնի վարիչ Ն.Գ. Հունանյանը մասնակցեց «Կրթական ծրագրերի համահնչեցում #WFME (Բժշկական կրթության համաշխարհային ֆեդերացիա) չափորոշիչներին» թեմայով վերապատրաստման դասընթացներին: ՈԱԱԿ-ի նախաձեռնած դասընթացներին մասնակցում էին Հայաստանում գործող 4 բժշկական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ և անհատներ (**ՀԻՄՔ՝ մասնակցության հավաստագիր**):

Գործողություն 1.8. Ամբիոնի գործնական պարապմունքների իրականացման համար նախատեսված սենյակների վերազինում՝ անհրաժեշտ գործիքների, սարքավորումների և ուսումնական նյութի ձեռք բերում (նորոգում):

Այս ուղղություններով լայնամասշտաբ բարեփոխումներ են պլանավորվում գալիք տարիներին՝ ԱԲՀ նոր մասնաշենքի շահագործումից հետո (Տե՛ս **Ամբիոնի ուսումնագիտական ռեսուրսները**):

Գործողություն 1.9. Ամբիոնային աշխատանքների պլանավորում և համակարգում

Ամբիոնային աշխատանքների պլանավորումը և համակարգումն իրականացվել է հավետու ժամանակահատվածի ընթացքում անընդհատ. կատարվել է հերթապահությունների, դասալսումների անցկացման, կիսամյակային միջանկյալ և ամփոփիչ քննությունների, լուծարքների և այլ հարցերի պլանավորում և իրականացում (**ՀԻՄՔ՝ Բժշկակենսաբանական առարկաների ամբիոն, 2022-2023 ուս.տարի, ամբիոնի նիստերի արձանագրություններ**):

Գործողություն 1.10. Դասընթացների ծրագրերի մշտադիտարկում, արդիականացում

Դասընթացների թարգմանված ծրագրերը դիտարկվել, վերանայվել են, բովանդակային փոփոխություններ չեն եղել, որոշակի ոճական և տեխնիկական խնդիրներ են ուղղվել:

Գործողություն 1.11. Մասնակցություն ԱԲՀ-ի գիտական խորհրդի նիստերին

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնը մասնակցել է գիտական խորհրդի նիստերին, որոնց քննարկումներին ամբիոնը ցուցաբերել է ակտիվ մասնակցություն՝ նիստերի օրակարգերում քննարկվող տարբեր հարցերի վերաբերյալ: Մասնավորապես՝ 2022-23 ուս. տարվա մարտ ամսին կայացած նիստում Ն.Գ. Հունանյանը, անբավարար ակադեմիական առաջադիմությամբ ուսանողների՝ համալսարանից հեռացման վերաբերյալ քննարկման ժամանակ, մանրակրկիտ ներկայացրել է ամբիոնի որոշ առարկաներից «Մարդու անատոմիա», «Հյուսվածաբանություն», «Նորմալ Ֆիզիոլոգիա», «Տեղագրական անատոմիա և օպեր. վիրաբուժություն» նման ուսանողների անբավարար առաջադիմության խնդիրը, դրա

հնարավոր պատճառները, և հաջորդիվ կայացած ամբիոնի նիստում հարցը քննարկել է համապատասխան դասախոսների հետ: Ներկայացվել են առաջարկություններ՝ վերոհիշյալ դասընթացներից մասնագիտական աջակցություն տրամադրելու և ուսանողներին հնարավորինս օգնելու նպատակով *(ՀԻՄՔ՝ ԱԲՀ գիտխորհրդի նիստերի արձանագրություններ, «Բժշկականսարանական առարկաների» ամբիոնի 2023 թ. ապրիլի 6-ի նիստի արձանագրություն):*

Գործողություն 1.12. Միջամբիոնական փոխադարձ դասալսումների պլանավորում և անցկացում՝ փորձի փոխանակում

2022-23 ուս. տարում իրականացվել են երկու միջամբիոնական դասալսումներ: Ամբիոնի վարիչ Ն. Հունանյանը դասալսել է «Ներքին հիվանդություններ» առարկան՝ Ի. Առաքելյանի մոտ՝ աշնանային կիսամյակում / 501, 502 խմբեր, դասախոսություն, 22 սեպտեմբեր/: Իսկ Ն. Խլղաթյանը գարնանային կիսամյակում՝ մայիս ամսին, կատարել է պլանավորված միջամբիոնական դասալսում՝ «Բնագիտական առարկաների ամբիոնում» դասախոս Հ. Զավրուշյանի մոտ, կենսաքիմիա առարկայից: *(ՀԻՄՔ՝ Բժշկականսարանական առարկաների ամբիոն, ԳՈՐԾ 7՝ 2022-2023 ուս.տարի, դասալսման ժամանակացույց և դասալսման արձանագրություններ, աշնանային և գարնանային կիսամյակներ):* Կազմվել են դասալսման արձանագրությունները, իսկ արդյունքները քննարկվել են ամբիոնի վարիչների և համապատասխան դասավանդող մասնագետների հետ:

2. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 2.1. Ուսանողներին մասնակից դարձնել առարկայական ուսումնական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման գործընթացին

Ինչպես արդեն նշվեց գործողություն 1.10. ում, դասընթացների թարգմանված ծրագրերն են դիտարկվել, բովանդակային փոփոխություններ չեն եղել, որոշակի ոճական և տեխնիկական խնդիրներ են ուղղվել: Այդ իսկ պատճառով ուսանողներ չեն ներգրավվել :

Գործողություն 2.2. Ուսանողներին հնարավորինս ներգրավել ամբիոնում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման և իրականացման գործընթացին

- Ինչպես արդեն նշվել է «*Ամբիոնի ուսումնագիտական ռեսուրսները*» կետում, նոր մասնաշենքի կառուցումից հետո հնարավոր կլինի համալրել ամբիոնի մասնագիտացված կաբինետներն ու լաբորատոր սենյակները ժամանակակից ուսումնագիտական ռեսուրսներով: Սա թույլ կտա ԱԲՀ-ում իրականացնել գիտահետազոտական աշխատանքեր և դրանցում ներգրավել նաև ուսանողներին:
- Ներկայումս ԱԲՀ որոշ ուսանողներ ներգրավված են նաև գիտական աշխատանքներում: Բուժական ֆակուլտետի երկրորդ կուրսի ուսանող Համգեհ Դորբանին բազմիցս իր նախագծերն ակտիվորեն քննարկել է ամբիոնի դասախոսներ Ա. Մինասյանի, Ն. Հունանյանի, Հ. Ստեփանյանի և Ն. Խլղաթյանի հետ, ովքեր ուղղորդել են նրան գիտական գործունեության ասպարեզում: Վերահիշյալ ուսանողը 2022-23 ուս տարում լույս տեսած

գիտական հրապարակումներ՝ գիտաժողովի նյութեր ունի ամբիոնի դասախոսներ Հ. Ստեփանյանի և Ն. Խլղաթյանի հետ:

<https://ieeexplore.ieee.org/abstract/document/10044491>

<https://ieeexplore.ieee.org/abstract/document/10036283>

<https://ieeexplore.ieee.org/abstract/document/10044511>

Գործողություն 2.3. Խորհրդատվությունների կազմակերպում, անցկացում

- Հաշվետու ժամանակահատվածում կազմվել և հաստատվել են ամբիոնի հերթապահության գրաֆիկները՝ աշնանային և գարնանային կիսամյակների համար: Խորհրդատվություններն իրականացվել են ըստ սահմանված հերթապահության գրաֆիկների: Բացի այդ, խորհրդատվություններ տրամադրվել են նաև այլ օրերին՝ ելնելով ուսանողների պահանջից (*ՀԻՄՔ՝ 2022-2023 ուս.տարվա խորհրդատվությունների մատյանի համապատասխան գրանցումներ*): Դասախոսների կողմից տրվել են լրացուցիչ բացատրություններ, նշվել են գրականության այն հղումները, որոնք կօգնեն ուսանողի կողմից նյութի ավելի լավ ընկալմանը:

Խորհրդատվություններ են տրվել.

- ✓ առարկայական տարբերություններ հանձնող ուսանողներին,
- ✓ անհատական աշխատանքների կատարման ուղղությամբ,
- ✓ միջանկյալ և ամփոփիչ քննություններից առաջ՝ անհասկանալի հարցերի քննարկման և քննություններին նախապատրաստման համար:

- Խորհրդատվություններ տրամադրվում են նաև կուրսի խորհրդատուների կողմից: 2022-2023 ուս. տարում ամբիոնի վարիչ Ն. Հունանյանը՝ լինելով 501 և 502 խմբերի խորհրդատու, և ամբիոնի դասախոս Ն. Խլղաթյանը՝ լինելով 601,602,603 խմբերի խորհրդատու, բազում հանդիպումներ են ունեցել ուսանողների հետ, ներկայացրել համալսարանում գործող կարգերը / դրանց փոփոխությունները, քննարկել ուսանողների առաջադիմությունը, հետևել նորմալ հաճախումներին, քննարկել տարբեր առարկաներից ձեռք բերած ամփոփիչ միավորները, խմբերի առաջադիմությունը և այլն: Անհրաժեշտության դեպքում խմբերը հանդիպել են նաև դեկան Ա. Կարապետյանի և ուսումնական մասի այլ ներկայացուցիչների հետ: Քննարկվել են ուսանողներին հուզող բազմաբնույթ այլ հարցեր (*ՀԻՄՔ՝ 2022-2023 ուս.տարվա խորհրդատուի մատյանների համապատասխան գրանցումներ*):

Գործողություն 2.4. Ուսանողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների գնահատման ձևերի, ընթացակարգերի, չափանիշների պարբերական քննարկումներ

«Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնի նիստերի քննարկումներում մշտապես ուշադրության կետրոնում են նաև գնահատման հետ կապված հարցերը, բարելավման ուղիների որոնումն ու առաջարկների ներկայացումը: ԱԲՀ –ում գործող բազմաբաղադրիչ գնահատման համակարգը ներառում է այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են ուսանողների հաճախումները (16 միավոր), ընթացիկ ակտիվությունը (20 միավոր), անհատական աշխատանքների ներկայացումը (14 միավոր), միջանկյալ (25+25 միավոր) կամ ամփոփիչ (50 միավոր) քննություններից ձեռք բերված միավորները: Հաշվի առնելով ԱԲՀ ուսանողների, ինչպես նաև դասախոսների կարծիքները, «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնը նախորդ տարի հանդես էր եկել առաջարկությամբ՝ **թողնել միայն մեկ**

անհատական աշխատանք՝ տալով առավելագույնը 14 միավոր: Կամ անհատական աշխատանքների քանակը թողնել դասախոսի հայեցողությանը՝ էլնելով նաև առարկայի առանձնահատկություններից և հատկացված ժամաքանակից: */ՀԻՄՔ՝ Բժշկակենսաբանական առարկաների ամբիոն, 2021-2022 ուս.տարի, 2021թ. սեպտեմբերի 29-ի նիստի արձանագրություն, կետ 5/*: Առաջարկությունը քննարկվել է գիտխորհրդի նիստերում, դեռ հավանության չի արժանացել:

Ընթացիկ տարում քննարկումներ են եղել նաև մասնագիտական առարկաների առաջադրանքների կազմման /գնահատման ուղղությամբ:

3. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 3.3. Ընդլայնել ամբիոնի դասախոսական կազմի կողմից հրատարակվող գիտական հոդվածների քանակը

- 2022-23 ուս. տարվա ընթացքում «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնի ՊԴ կազմը մասնակցել է հանրապետական և միջազգային բազմաթիվ կոնֆերանսների, անցել վերապատրաստումներ, խմբագրել գրքեր, տպագրել գրքի գլուխներ, գիտական հոդվածներ, թեզիսներ տարբեր ամսագրերում և ժողովածուներում: *(ՀԻՄՔ՝ ամբիոնի գիտական գործունեության՝ դասախոսների հոդվածների, թեզիսների, կոնֆերանսների մասնակցության մասին տեղեկություններ ԱԲՀ գիտական մասի համակարգչում)*:
- Ողջունելի է ամբիոնի դասախոսներ Ն. Խլղաթյանի և Հ. Ստեփանյանի՝ ուսանող Համգեհ Ղորբանիի հետ երեք միջազգային գիտաժողովի նյութերի տպագրությունը.
<https://ieeexplore.ieee.org/abstract/document/10044491>
<https://ieeexplore.ieee.org/abstract/document/10036283>
<https://ieeexplore.ieee.org/abstract/document/10044511>

4. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Այս ուղղությամբ ամբիոնի կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Գործողություն 4.2. Մասնակցություն ներհամալսարանական ՈԱ միջոցառումներին

- Ամբիոնը հաշվետու ժամանակահատվածում մասնակցել է Համալսարանի ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտոր Ա. Գյոզալյանի կողմից կազմակերպված հանդիպում- քննարկումներին:
- Համալսարանում գործող որակի ներքին ապահովման համակարգի պատասխանատուների կողմից ներկայացվել են «Համալսարանի 2021-22 ուստարվա շրջանավարտների՝ ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ» արդյունքները, որոնք ակտիվորեն քննարկվել են «Բժշկակենսաբանական առարկաների» ամբիոնի 2022 թ. սեպտեմբերի 23-ին կայացած թիվ 3 նիստում, համապատասխան առաջարկները ներկայացվել են ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտոր Ա. Գյոզալյանին *(ՀԻՄՔ՝ Բժշկակենսաբանական առարկաների ամբիոն, 2022-2023 ուս.տարի, ամբիոնի թիվ 3 նիստի արձանագրություն)*:

«ԲԺՇԿԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ»

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝

Կ.Գ.Թ. Ն.Գ. ՀՈՒՆԱՆՅԱՆ

Պաշտոնական փաստաթուղթը գտնվում է համալսարանում: